ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

Министерство образования, науки, культуры и спорта Республики Армения Ереванский специальный образовательный комплекс для детей с нарушением слуха

Republic of Armenia The Ministry of Education, Science, Culture and Sport Yerevan special educational complex for children with hearing disorders

իմ և Նորքի այգիներ193, հեռ.65-10-50,65-10-60

Էլ. փոստ lxue.dproc@mail.ru

«Կաուպերվուդ ընդ Կո» ՍՊԸ -ի տնօրեն՝պարոն Ա. Մկրտչյանին

---

cowperwood@yandex.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ
09.01.2023թ կնքված թիվ ԼԽՈՒԵ-ԳՀԱՊՁԲ-23/1-1 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«Երևանի Լսողության Խանգարումներ Ունեցող Երեխաների Հատուկ Կրթահամալիր» ՊՈԱԿ -ի (այսուհետ՝ Գնորդ) և «Կաուպերվուդ ընդ Կո» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 09.01.2023թ.-ին կնքված թիվ ԼԽՈՒԵ-ԳՀԱՊՁԲ-23/1-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1 կետի համաձայն Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում Գնորդը կարող է հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 1 (մեկ) օրից ավելի, բացառությամբ հացի մատակարարման դեպքերը, որի համար ժամկետ է սահմանվում 60 րոպեն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 (մեկ) օրից ավելի, բացառությամբ հացի մատակարարման դեպքերը, որի համար ժամկետ է սահմանվում 60 րոպեն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ պայմանագիրը համապատասխանաբար հայտարարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գնորդի կողմից մինչ օրս չի իրականացվել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ Գնորդն ղեկավարվելով վերոնշյալ իրական հիմքերով միակողմանի (ամբողջությամբ) լուծում է Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում նշված որոշումը Պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը:

«ԵՐԵՎԱՆԻ ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ՝ **Ա. ԲԱԲԱՅԱՆ**